

### 5. Հանրապետության կոյուղու համակարգ

2004թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության կոյուղու գլխավոր կոլեկտորի, փողոցային, միջթաղային ու միջբակային ցանցերի միագիծ ընդհանուր երկարությունները կազմել են համապատասխանաբար 1101.7, 2509.5 և 615.3 կմ, որից քաղաքային համայնքներում՝ 1042.7, 2335.5 և 610.3 կմ:


Կոյուղու ցանցերի միագիծ երկարություններն ըստ մարզերի, 2003թ.

(կմ)


	Գլխավոր կոլեկտոր	Փողոցային ցանց	որից՝ կարիք ունեն փոխման	Միջթաղային և միջբակային ցանց
ք.երևան	220.6	398.9	183.5	484.3
Արագածոտն	46.6	107.0	50.0	2.0
Արարատ	95.8	181.0	82.0	7.0
Արմավիր	74.2	220.0	95.0	8.0
Գեղարքունիք	134.5	179.0	69.0	15.0
Լոռի	130.7	358.0	155.0	26.0
Կոտայք	146.8	356.0	170.0	30.0
Շիրակ	76.7	322.0	151.0	21.0
Սյունիք	61.3	193.0	83.0	11.0
Վայոց ձոր	38.8	59.6	22.9	5.0
Տավուշ	75.7	135.0	31.0	6.0
Ընդամենը ՀՀ	1101.7	2509.5	1092.4	615.3

2003թ. ընթացքում կոյուղի բաց է թողնվել 120.9 մլն. խոր. մ կեղտաջուր: Մաքրող սարքավորումներով բաց է թողնվել 88.5 մլն. խոր. մ կեղտաջուր, այդ թվում չափորոշային մաքրվածը՝ 80.1 մլն. խոր. մ, ոչ բավարար մաքրվածը՝ 8.4 մլն. խոր. մ: Առանց մաքրման հեռացվել է 32.4 մլն. խոր. մ կեղտաջուր:


Կոյուղի բաց թողնված կեղտաջրերի ծավալն ըստ մարզերի, 2003թ., մլն. խոր. մ




Կոյուղի բաց թողնված կեղտաջրերի ծավալը, 1970-2003թթ., մլն. խոր. մ




Մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրերի ծավալը ըստ մարզերի, 2003թ., մլն. խոր. մ



Մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրերի ծավալը, 1970-2003թթ., մլն. խոր. մ



**Առանց մաքրման հեռացված կեղտաջրերի ծավալն ըստ մարզերի, 2003թ., մլն. խոր. մ**



2003թ. կոյուղու համակարգում արձանագրվել է 21839 վթար, որից Երևանում՝ 5839 կամ 26.7%:

**Ֆինանսական ընդհանրացված ցուցանիշները, 2003թ., մլն. դրամ**

Կեղտաջրերի հեռացումից ստացված փաստացի մուտքեր	1411.2
որից՝ բնակչությունից	773.3
Ծախսեր, ընդամենը	1416.0

Հանրապետությունում կեղտաջրերի հեռացման և մաքրման դիմաց տարիների ընթացքում կուտակվել է 2819.7 մլն. դրամի պարտք, որի 87.0%-ը կամ 2453.6 մլն. դրամը կազմել է բնակչության պարտքը: